ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2023-2024
Պատմություն (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____
Դպրոց _____
Դասարան _____ Խումբ _____

1. Որտեղի՞ց է վերցված հայերեն թարգմանված առաջին գրավոր նախադասությունը.

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» կամ աշխարհաբար՝ *«Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը»*: (1.0)

_____

2. Մայրաքաղաքներից ո՞ր երկուսը չեն գտնվում Մեծ Հայքի այս նահանգում: Ո՞ր նահանգն է առանձնացված: (1.0)

1. Վան, Վաղարշապատ
2. Տիգրանակերտ, Երվանդաշատ
3. Վան, Տիգրանակերտ
4. Կարս, Անի

_____

3. Այս պատմիչի անունը նշանակել է «Բարի լուր բերող»: Ինչպե՞ս էր կոչվում նրա աշխատությունը, որտեղ նկարագրել է Սբ. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները: (1.0)

---

4. Հայերի մղած նշանավոր ճակատամարտերն ու դրանց թվականները լրացրեք աղյուսակում: (2.0)

Տիգրանակերտի, Ներսեհապատի, Ավարայրի, Վարդանակերտի, Արածանիի, Ձիրավի, Սևանի, Հռանդեայի, Ակոռի

	Ճակատամարտի անվանումը	Տարեթիվը
Հայ-հռոմեական		
Հայ-պարսկական		
Հայ-արաբական		

5. Կատարել ինքնապաշտպանական կռիվների, դրանց տարեթվերի, վայրերի, ղեկավարների համապատասխանեցում: Պատասխանները նշել ըստ առաջին սյունակում տրված հերթականության: (2.0)

N	Ինքնապաշտպանական մարտեր	N	Վայրը	N	Տարեթիվը	N	Ղեկավար
1	Քաղաքամեջի ինքնապաշտպանությունը	1	Արևմտյան Հայաստան	1	1915թ. սեպտեմբեր	1	Եսայի Յաղուբյան
2	Այգեստան թաղամասի մարտերը	2	Թուրքիա	2	1915թ. հունիս	2	Մկրտիչ Յոթնեղբայրյան
3	Մուսա լեռան ինքնապաշտպանությունը	3	Վան	3	1915թ. ապրիլ	3	Արմենակ Եկարյան
4	Շապին Գարահիսարի կռիվները	4	Սուետիա	4	1915թ. հուլիս	4	Հայկ Կոսոյան
5	Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերը	5		5		5	Ղուկաս Տեռվլեթյան

1) 1 3 4 5	2) 1 3 3 4	3) 1 4 3 3	4) 1 4 3 2
2 4 2 1	2 3 3 3	2 3 2 3	2 3 2 3
3 1 1 3	3 4 4 1	3 4 3 2	3 2 4 5
4 2 2 2	4 1 2 5	4 2 1 1	4 2 1 4
5 3 3 4	5 2 1 2	5 1 2 4	5 1 2 1

6. Ընդգծե՛ք տեքստում հանդիպած սխալները և ուղղե՛ք:
1828թ. փետրվարի 10-ին Ադրիանապոլսում կնքվեց ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը: Այդ պայմանագրով Արևմտյան Հայաստանի ևս մի ընդարձակ տարածք՝ Երևանի ու Նախիջևանի խանություններով անցավ Պարսկաստանին: Սահմանի մի հատված անցնում էր Ախուրյան գետով: **(2.0)**

_____
_____
_____
_____

7. Այս արքաներն ստացել են մականուններ: Լրացրե՛ք դրանք նրանց անվան կողքին՝ նշելով նաև կառավարման տարիները: (3.0)

Աշոտ Երկրորդ_____ Լևոն Երկրորդ_____

Տիգրան Երկրորդ_____ Աշոտ Երրորդ_____

Տրդատ Երրորդ_____ Արտաշես Առաջին_____

8. Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը: (3.0)

1. Միապետություն 4.Կոալիցիա

2. Երկիշխանություն 5. Դաշնային հանրապետություն

3.Սահմանադիր ժողով 6. Հրովարտակ

ա) Դիմում-հայտարագիր, կոչ, որը ենթակա է կատարման

բ) Պետական կառավարման համակարգ, որի պայմաններում գոյություն ունեն երկու իշխանություններ

գ) Համաժողով, որը սահմանում է պետության կառավարման ձևը և մշակում երկրի հիմնական օրենքը

դ) Տարբեր կուսակցությունների անդամներից կազմված կառավարություն

ե) Պետական կառավարման ձև, որի մեջ մի քանի հանրապետություններ միավորվում են մեկ դաշնակցային պետության մեջ

1	2	3	4	5	6

9. Եռապետության հայտնի անդամներից ու՞մ են պատկանում այս խոսքերը, որոնք հետագայում արդեն դարձան թևավոր խոսքեր: Նշե՛ք ևս մեկ հայտնի դարձած թևավոր խոսք, որ կապված է այս նշանավոր մարդու անվան հետ: (2.0)

Մի անգամ, երբ *նա* անցնում էր գալլական մի փոքրիկ գյուղի միջով, նրա զինակիցներից մեկը կատակելով հարցրեց.

-Մի՞թե Հռոմից այսքան հեռու գյուղում էլ պայքար է գնում իշխանության և առաջինը լինելու համար:

-Ես գերադասում եմ լինել առաջինն այստե՛ղ, քան երկրորդը՝ Հռոմում,-ամենայն լրջությամբ հնչեց պատասխանը:

---

10. Ովքե՞ր են նկարներում պատկերված անձինք: Ի՞նչ տիտղոս է նրանց միավորում: (3.0)

1) 2) 3) 4)

1)---

2)---

3)---

4)---